ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» հոկտեմբերի 2023 թվականի N: 394 -Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման» կարգի 6-րդ կետի 5-րդ ենթակետի, 18-րդ կետի, արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի 10-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 2023 թվականի հոկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Նոր Ախուրյան թաղամաս Յուրի Ղամբարյան փողոց 2 անցում 27Ա հասցեի հարևանությամբ գտնվող կիսակառույց շենքերում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Երկրաշարժի հետևանքով փլուզված շենքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը հրդեհի օջախի առկայությամբ» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին, ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փրկարար ծառայության փոխգնդապետ՝ Արսեն Ադամյանին:

3. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը և Ախուրյանի թիվ 53 հրշեջ փրկարարական ջոկատը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

5) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը.

6) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» տեղամասը.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի ղեկավար կազմը:

4. Հանձնարարել՝

1) ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

ա. մինչև 2023 թվականի հոկտեմբերի 16-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը.

բ. կազմակերպել մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

գ. մինչև 2023 թվականի հոկտեմբերի 17-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին.

2) ուսումնավարժության մասնակիցներին՝

պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով, ուսումնավարժության ընթացքում ապահովել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝

ապահովել ուսումնավարժության լուսաբանումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է